

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшак“

ՄԱՅԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունուում են ամէն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Դարեր սարկութիւն: — Եւրոպայի տեսու-
թիւն: Նամակ Վարսից: Նամակ Նոր-Նանի-
քանից: Նամակ Գանձակից: Նամակ Խմբագրին:
Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր: Արտա-
քին տեսութիւն: Բաժնում և հայերի գաղ-
թականութիւն: Անգլիա: Արտաքին լուրեր:
«Մշակ» հեռագրիւններ: Յայտարարութիւններ:
— Տեղեկացոյց:

ԴԱՐՆԻՈՐ ՍՏՐԿՈՒԹԻՒՆ

Հատ անգամ մենք լսում ենք
օտարներից մեղադրանքներ հա-
յերի դէմ առ հասարակ, բայց
մանաւանդ թիւրքաց հայերի դէմ:
Եւրոպացիները շատ ան-
գամ և մեծ մասամբ արդար են
լինում:

Վերջին ռուս թիւրքաց պա-
տերազմից առաջ և նոյն իսկ պա-
տերազմի ընկճացքում, երբ յա-
րուցվեցաւ թիւրքիայի քրիստո-
նայ ազգերի ազատութեան խն-
դիրը, թիւրքաց հայերին շատ
իրաւացի կերպով մեղադրում էին
որ նրանք թիւրքիապատակ քր-
իստոնեայ այլ ազգութիւնների
հետ համեմատելով ոչինչ չարեցին
իրանց մարդկային իրաւունքները
ձեռք բերելու համար: Իսկ այդ ի-
րաւունքները, առ հասարակ, ձեռք
են բերվում թրով և սրով, արիւ-
նով և զոհաբերութիւններով....

Թիւրքիայի հայը, ընդհակա-
ռակն իր արինի, իր կեանքի գը-
նով չէր պաշտպանում իր իրա-
ւունքները, այլ համբերում էր երբ
մահաւորական բարբարոս, վայ-
րենի, անգութ, կատաղի, գազա-
նական լուծը նրան ճնշում էր,
ոտնակոխ էր անում նրա ամենա-
սուրբ զգացմունքները, խլում էր
նրանից նրա սեփականութիւնը,
անարգում էր նրա ընտանեկան
կեանքը....

Հային մեղադրում են վախու-
տութեան, իր հայրենակիցների
դէմ գաւառականութեան մէջ:

Եւրոպացիները մեղադրանքները
գուցէ արդար են, բայց արդեօք
կարող էր այլապէս լինել, ազգը
կարող էր արդեօք աւելի լաւ լի-
նել քան թէ նա է: Միթէ կա-
րելի է սպասել որ մի ազգութիւն,
որ գարեբով ապրում է մի սա-
մանափակված շրջանում, հեռու

ամեն քաղաքակրթական յարաբե-
րութիւններից, մտնողական տե-
րութեան և մահաւորականութեան
ճնշման տակ: չունենալով ոչինչ
կապեր, ոչինչ յարաբերութիւններ
գրաւ աշխարհի հետ, որ այդ
տեսակ ազգ ունենար ազգային
ինքնասիրութիւն, հասնէր ինք-
նաճանաչութեան:

Թիւրքիայի Հայաստանը մը-
նում էր դարերով ստրկութեան
մէջ, և ոչ մի արտաքին ոյժ չէր
ներգործում նրա վրա: Ռուսա-
տանի հայերի հետ թիւրքիապա-
տակ հայերը յարաբերութիւն չու-
նէին երկու երկիրների մէջ ճա-
նապարհներ չունենալու պատճա-
ռով, իսկ նրանց ներքին առաջ-
նորդող ոյժերը ուժեղ էին: Կ.
Պօլսի դարդակախօս լրագրութիւ-
նը և թիւրքիայի հայոց հոգևո-
րականները, որոնք իրանց զար-
գացմամբ աւելի բարձր էին, քան
թէ ամբողջ:

Հայաստանի և ամբողջ Փոքր-
Ասիայի հայաբնակ քաղաքները
միմեանց մէջ նոյնպէս ոչինչ կա-
պեր և յարաբերութիւններ չու-
նէին:

Ինչե՞ թիւրքաց հայերը քուր-
դերի դէմ իրանց չէին պաշտպա-
նում, ինչե՞ հայը վախկոտ է, ինչե
հայերը չը մտածեցին շատ զենքեր
գնել ռուսաց զօրքի Հայաստա-
նում եղած ժամանակ, ի՞նչ ուն-
գարացիների պէս հայաբնակ զա-
նազան գաւառները չեն աշխա-
տում տարվայ մէջ մէկ երկու ան-
գամ հաւաքել մէկ տեղ երիտա-
սարգութիւնը երգեցողական կամ
մարմնամարզական տոնախմբու-
թիւնների առիթով, բայց իսկա-
պէս նրա համար որ միմեանց
պատահեն, տեսնվեն, խօսեն....

Բայց այդ բոլորը կարելի է
արդեօք պահանջել մի ազգից, որ
ոչինչ չէ տեսել չէ լսել չէ իմա-
ցել, որ ոչինչ կապ չունի գրաւ
աշխարհի հետ:

Դարեր ստրկութեան և
ստրկութեան դէմ ներգործելու
համար գրաւ ոյժ է հարկաւոր:

Ստրկութիւնը ինքն իրան
չէ կարող ազատութիւն դառ-
նալ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿ ԳԱՐՍԵՑ

27 սեպտեմբերի

Երբոր միջոց դրած նամակներս մէջ գուցէ ես
որդէն ձանձրացրել եմ թիւրքացիներին գաղթա-
կանութեան վերաբերմամբ շատախօս գտնվելով,
բայց չէր կարելի շատախօս չը լինել այն գոր-
ծի մասին, որը իմ աշխուժ մեծ նշանակութիւն
ունէր ազգի ընդհանուր շահերի մէջ և որից կա-
րող էր յառաջ գալ շատ հազար կենդանի էակ-
ների տառապանք, մահ, վիրա, թշուառութիւն:
Ով գտնվել է ինքն այդ միջոցի մէջ, ով ենթարկ-
վել է անձամբ այն խոր տպաւորութիւններին, որ
գործում էին մաքաւուր, անպատկեան, երկ-
բայութեան, տատանման, թշուառութեան հայե-
րը, նա չէր կարող ամեն բոլոր չէր զբաղել իր
սիրտը ու միտքը նոցա վիճակով: Վասն որոյ
ես թոյլ կը տամ ինձ վերջին անգամ ես մի քա-
նի խօսք ասել գաղթականութեան վրա, ոչ թէ
կրկին ես յուսահատութեան ճիւղ բառնալով,
տրանջելով, ցաւելով կամ թէ մէկին և միւսին
զրգուելով, խի՛նելով, պախարակելով, այլ միմեանց
բանջով, բաւականութեամբ և երախտագիտու-
թեամբ դէպի նոցա, որոնց հարկաւոր է ազգի
և պատմութեան առաջ միշտ յայտնի այդ ե-
րախտագիտութիւնը: Գուցէ իր ժամանակին մի
քանիսն էր գործունէութիւնը չափազանցած լի-
նեմ նոցա խրախուսելու և ոգևորելու համար,
կամ թէ միւսերի վրա խառն յարձակված: Նո-
ցա զրգուելու նպատակաւ, բայց ճշմարտութիւնը
այն է՝ որ իրաւի գաղթականութիւնը խափա-
նելու համար շատերը թափեցին իրանց ձիւրը,
բայց առանց գինեղալ լազարելի բոլոր աշխա-
տանք, բոլոր ջանք և իրողութիւն առաջնորդի, և
անուանեաց, և հարուստների, և ճարտարա-
խօսների միանգամայն ապարդիւն և ի դուր
կանցնէին ժողովուրդը պահելու համար, Միայն
լազարելին է պատկանում փառքը այդ մեծ
հայրենասիրական գործի, միայն լազարելին հը-
զօր բազուկը կարողացաւ խոչընդոտ դնել այդ
անգամելի հեղեղի դէմ, վասն զի ժողովուրդը
կորցրել էր բոլոր իւր վստահութիւնը որ և ինչ
ուրիշ խօսքին. նորա համար էլ չէր մնացել
փառք, որի հակառակը նա չունենար պատ-
րաստ իր բերնում, էլ չէր կար ոչինչ համոզողու-
թիւն ու յորդորանք, որը չը բացատրէր նա որ և
ինչ ձախ ու շահասիրական մտքով. էլ չէր կար
ոչինչ յոռադրութիւն և իրաւաւոր. որը կարող
լինէր նրա վստահութիւնը յայտնել. նրա հա-
մար առաջնորդը խաբող էր և շահասէր, որով
հետեւ նա կերտար միայն մտածող շահատու հօտ
ունենալու վրա, նորա համար հարուստը եւ խա-
բեայ և շահասիր էր, որովհետեւ նա կերտար
լուի իր հաբտատարութեան համար հոգեցող, նրա
համար բարեկամը դատարկախօս էր, վասն զի
նա սխալվում էր: Մէկ խօսքով ռուսի հայը
բոլոր իր հաւատը կորցրած որ և ինչ մէկի
խօսքին, բոլոր իր ցեղական յամաւորութիւնը և
հաստատմութիւնը լարած, մտքումը դրել էր
միայն մի բան կատարել. գաղթել Ռուսաստան
էլ ոչինչ վրա չը մտածելով: Այն այս ժամանակ
նորան հասնում են հրամանատարի խօսքերը պը-
րօկամացիայի մէջ, այն հրամանատարի, որի
անկեղծութեան ոչինչ չառկած չունէր գուցէ իկ
հայը, որին լուի և եթ ընդունում էր նա հեղի-
նակ, արդարաւոր, անհաստէր, հաւատարիմ
ազգի շահին և ցաւակից: Բայց այստեղ ես հայը
սկսում եմ կասկածել. ենթադրելով որ չիցէ թէ
պրօկամացիան մի ֆանտ է ուրիշների կողմից
հնարած, վասն զի հօրա վրա չկայ դրօշմած
տեղանակական կիւրքը. վարչութիւնը ստիպում է
յետ առնել բոլոր բաժանած յայտարարութիւն-
ները փնթը դրօշմելու համար, բայց կրկին կա-
տարեղանք չը հաւատարմով կամաց կամաց պատ-
րաստութեան արտաքինը ճանապարհ ընկնելու:

Իմանալով այդ լազարելի ուղարկում է բո-

լոր յրջանների կատարելներին հեռագրով հե-
տեւել հրամանը. «Արդեօք է՞ հայերին գաղթել
տանկաց հողից մեր սահմանները և եթէ նոցա
չը հնազանդվեն ձեզ և ինքնագլուխ չարժեն,
լիազօր իրաւունք եմ տալի բռնութեամբ պա-
հել նոցա, իսկ եթէ այնուհետեւ ես փորձեցի
անցնել, այն ժամանակ ուր վրա հասաք
կանգնեցրէ՞ք նոցա և յետ գարձնելով յանձնեցէ՞ք
տանկաց կառավարութեան իրանց առաջվայտե-
ղերը զետեղելու համար: Խառն կատարելով
այս հրամանս, յայտնեցէ՞ք ևս ամենքին: Այն
այս խօսքերն են, որ ունեցան վճռողական ներ-
գործութիւն. դարձնելով 50 առաջ ընկած ըն-
տանիք, որոնց անէ՞ծը, աւաղ, պիտի միշտ ծառ-
րանայ իմ վրա, իբրեւ նոցա մատնացոյց անողի,
միւսերը էլ չը վստահացան տեղից շարժվել: Ի-
նչով առաջնիւնց գործերի հետ ես, դեռ ան-
հանգիստ էի կարծելով թէ գաղթողները կա-
րող են գալ վերջնապահ գործերի հետ և յիշա-
յալդէս էլ պատահում է մասամբ, միայն հան-
գիպելով նոցա երկուստեք դրագունի օֆիցէր
Ա. Ալեքանը, որի սիրտը այնպէս խիստ բարա-
խում է միշտ հայրենասիրական զգացմունքով,
աշխատում է նկատել նոցա ճանապարհի մի կողմ
հաւաքված և գին. Գուլամփօյին յայտնելով տը-
նօրինում է նոցա գարձնելը, որ չը լինեն նոցա
օրինակ մնացածներին: Այսպէս միակ լազա-
րելի շնորհի խափանվում է այն աղէտը, որին
պիտի ենթարկվէին երկու հարիւր հազարից ա-
ւելի հողից, կարթագէնի նման անհետացնելով
իրանց յիշատակը մի ամբողջ գաւառի մէջ:
Փառք և յաւիտենական պարծանք մարգասէր
հերոսին և Ամենաբարձրիայի օրհնութիւն նորա
սերունդի վրա....

Եւ ինչ ենք տեսնում այժմ. Երբոր միջոց եկող-
ները շատախօս յայտնել իրանց խորին շնոր-
հակալութիւնը նոցա, որոնք աշխատել են պա-
հել գաղթողներին, որ հիմա գործով համոզ-
վում են որ իրանց երկուրդ տարածում է եղել
և անտեղի:

Գրեգոր Նիկողոսեան

ՆԱԽԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ

26 սեպտեմբերի

Հետեւելով «Մշակ» իր թղթակիցներին ստեպ
տուած խորհրդին, ես առանց առաջաբանի և
փիլիսոփայական խորհրդածութիւնների ուղղում
եմ հաղորդել այս նամակում քաղաքում պատա-
հած վերջին անցքերը:

Մեր հոգևոր դպրոցի կամ սեմինարի սրբազան
վերատեսուչը հինգ տարի մեր մէջ բնակվելուց
և չորս տարի իր հիմնած ուսումնարանը կառա-
վարելուց յետոյ, յուլիս ամսի մէջ իր հրաժա-
րականը առաւ ու հեռացաւ մեղանից: Պատ-
ճառը, ինչպէս ասում են, մի քանի խոշոր ան-
համաձայնութիւններ են, որ պատահել են օրը-
բազանի և մեր անուանի բանաստեղծի մէջ, որ
դպրոցի հիմնարկութեան օրը սկսած ուսուցիչ
էր այնտեղ և սրբազանի վաղուցվայ համալսա-
րանական ընկեր: Ահա համաձայնութիւնը առաջին
անգամ մեզ յայտնի եղաւ ապրիլ ամսի մէջ, երբ
յանկարծ դուրս եկաւ մամուլի տակից «Գրեգոր
Կայիաթայ» վերնագրով բնօրինակ, որի մէջ չա-
փազանց պարզ գոյնբերով նկարագրված է սրբա-
զանի կեանքը.... Յիշեալ բնօրինակը, որ մոտ-
ադրված է խճի-աղա կնիք անունով, մեր
անուանի բանաստեղծի գրչին է պատկանում:

Հոգաբարձութիւնը, խառնաձայնութիւնը չա-
փազանց համարելով, երկուսին էլ հեռացրեց
ուսումնարանից: Սրբազանը հինգ տարուց յետոյ
գնաց այն կողմ, որտեղից եկել էր, իսկ մեր
բանաստեղծը մնաց մեզ մօտ և ինչպէս ինքն
ասում է, մտադիր է չուտով մի տպարան բանալ
և հրատարակել հայերէն լեզուով մի շարք առա-
թերթի: Բայց այդ առ այժմ գեղե մտադրութիւն
է, իրողութիւնը այն է, որ նա այժմ ուրեք

Վերհենայի «Politische Correspondenz»
ազդին սեպտեմբերի 20-ից գրում են հե-
նանալը. «Բաթում քաղաքի և նրա զեղեցիկ
ուսահանգստի վեճակը ներկայումս աստիճ-
անում է ծովային իշխանութան ուշադ-
րեթինը: Հազիվ միջնաբերդի վրա սկսվել
ծածանվել ուռսաց քրօշակը, որ Սև ծովի
ուսատորմի և նաև հանգստանների գլխաւոր
վապեղե Արկաս հասաւ Բաթում տեղն ի

տեղը
Համմա
բոլոր
հուր
մի ք
պիտ
նի օ
ցանն
ւահ
թու
թան
վապ
պան
լինի
կար
առև
ծով
Բաթ
կեր
տա
որոն
զբա
կան
տա
այն
բնա
նեց
սան
սաց
յեր
ճառ
երկ
տվո
հայ
տա
առ
դա
հէն
մի
ըն
որ
մա
աղ
զրհ
փե
խա
վե
աղ
առ
տա
ժա
պա
թա
յոյ
նե
րե
նե
են
շո
խո
վե
Բա
նե
ին
թա
Հա
ան
նե
նր
լո
նա
նա
վա
այ
ՄԲ
նե
ու
ղի
այ

ԼՕՆԻՈՆ, 4/16 հոկտեմբերի: Անդլիական բանկը բարձրացրեց իր դիսկոնտո մինչև տասրեկան 6⁰/:

- | | |
|---|------|
| 1. Ն. Տէր-Ղևոնդեան Մայրենի լեզու. ա. տարի վեցերորդ տիպ. | — 35 |
| 2. „ „ „ բ. տարի չորրորդ տիպ. | — 40 |
| 3. „ „ „ գ. և դ. տ. երկր. տիպ. | — 70 |
| 4. Ղ. Աղայանց՝ Ուսումն Մայրենի լեզուի, երրորդ տիպ. | — 15 |
| 5. Տէր-Ստեփանեանի՝ Ոլջուրը քրիստոնէական հաւատոյ. | — 50 |
| 6. Գ. արքեպ. Ալապեան Նոխալիթանը գրաբար լեզուի մե ա. | — 40 |
| 7. Տէր-Կաթեանց՝ Русское Слово | — 35 |
| 8. Արովեանց՝ Հայոց պատմութիւն երկրորդ տիպ. | — 60 |
| 9. Հատընտիր ընթերցուածք ի մասնագրաց նախնեաց՝ հանդերձ
Ճանօթութեամբք Վիէննա Թռռնեան՝ | 4 — |
| 10. Թ որոս Լ և ո ն ի պատմական վէպ ազգ. կիսերից | 1 — |
- Այս օրերս կր տանանք Վիեննայից Առճին բառարաններ, Հայաստանի քարտեզներ
և ընտիր մատենագիրների աշխատութիւններից շատերը: